



ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ

ԱրդՀ տնտեսագիտության տեսության և
կառավարման ամբիոնի ավագ դասախոս,
տնտեսագիտության թեկնածու

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Գործարարության ոլորտի իրավական դաշտի կարգավորումն ու բարելավումը և ապագայի հանդեպ վստահության ծնավորումը հանգեցնում են տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Հոդվածում ներկայացված են գործարարության զարգացման միտումները ԼՂՀ տնտեսությունում: Պետական գույքի մասնավորեցումը, տնտեսավարող սուբյեկտների աճն ու գործունեության աշխուժացումը (օրինակ՝ բանկային հատվածում), ապահովեցին գործարարության ոլորտի զարգացում, որը շատ կարևոր է հանրապետության բնակչության բարեկեցության ու կենսամակարդակի բարձրացման և սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման համար:

Հիմնաբառեր. գործարարություն, ձեռնարկատիրություն, մասնավորեցում, բարենպաստ պայմաններ, տնտեսական աճ, իրավական դաշտի կարգավորում ու բարելավում, տնտեսավարող սուբյեկտների թվի աճ

Արցախահայության ազատագրական պայքարն ընթացավ Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից կազմակերպված տնտեսական շրջափակման պայմաններում, իսկ ավերիչ պատերազմական գործողությունների հետևանքով շարքից դուրս եկան հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային ու լուրտների և ինժեներային հաղորդակցման հարյուրավոր օբյեկտներ ու բնակ-ֆոնդի գերակշիռ մասը: Այդ բարդ իրավիճակում երիտասարդ հանրապետությունը ստիպված էր պատերազմից ավերված տնտեսական համալիրի վերականգնման գործընթացին զուգահեռ, 1994 թ. կրակի դադարեցման ռեժիմից հետո, ծավալել տնտեսական վերափոխումների գործընթաց:

1995 թ. սկսվեց տնտեսական բարեփոխումների և հիմնարար վերակառուցման ժամանակաշրջան: Վերոհիշյալ միջոցառումների ռազմավարական նպատակը տնտեսական, սոցիալական, քաղաքական ժողովրդավարության համակարգի զարգացման հիմքի վրա բաց հասարակության ստեղծումն էր: Այդ կապակցությամբ հանրապետությունում կարևորվեց սեփականության մասնավոր ձևի զարգացումն ու կատարելագործումը: 1997 թ. մեկնարկեց ԼՂՀ տնտեսական բարեփոխումների հաջորդ փուլը: Որոշակի փոփոխություններ իրականացվեցին հարկային օրենսդրության մեջ, որոնք նպատակ ունեին առավել բարենպաստ պայմաններ ստեղծել Արցախում գործարարության և ձեռներեցության զարգացման համար:

Շուկայական տնտեսությանն անցման պայմաններում հանրապետությունում սկսված կառուցվածքային բարեփոխումները, ձեռնարկատիրության ու գործարարության զարգացման բուռն գործընթացը պահանջեցին արմատական բնույթի մի շարք միջոցառումների իրականացում, որոնք ապահովեցին սոցիալ-տնտեսական զարգացում: Խորհրդային տարիների ձերբազատումից և հարկադրված պատերազմից հետո երկրի տնտեսությունը քայքայված էր: Ծավալուն ներդրումների և նոր առևտրային կազմակերպությունների ստեղծման ու կայացման համար անհրաժեշտ էր ապապետականացում, քանի որ պետական միջոցները շատ սուղ էին:

Վարչահրամայական տնտեսության՝ շուկայական տնտեսությանն աստիճանական անցումը կատարվում է ձեռնարկությունների մեծ մասի ապապետականացմամբ և մասնավորեցմամբ աշխատանքի արդյունավետության բարձրացման, շուկայական պայմաններին դրանց հարմարեցման միջոցով, շուկայական ենթակառուցվածքների և արտադրության զարգացման շուկայական-մրցութային ազդակների ստեղծմամբ: Ընդ որում, տնտեսության կենսական կարևոր ոլորտների ու սոցիալական գործընթացների, կուտակման ու սպառման, կառուցվածքային-տեխնոլոգիական փոփոխությունների իրականացման վրա պետությունն ունի ուղղակի և անուղղակի ներգործություն: Ըստ այդմ՝ ներկայացնենք որոշ թվային տվյալներ:

Ըստ ԼՂՀ ԱՎԾ տվյալների՝ 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցվել էին 1319 օբյեկտ և կազմակերպություն (ընկերություն), ընդ որում՝ 1176 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ կամ Կառավարության ծրագրով մասնավորեցման հաստատված օբյեկտների 99.2 տոկոսը, 71 կազմակերպություն և 72 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ իրավիճակն այսպիսին էր. մասնավորեցվել էին 1321 օբյեկտ և կազմակերպություն (ընկերություն), ընդ որում՝ 1177 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ կամ Կառավարության ծրագրով մասնավորեցման հաստատված օբյեկտների 98.9 տոկոսը, 71 կազմակերպություն և 73 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: Նշված օբյեկտների մասնավորեցումից մուտքերը կազմել էին 1926.3 մլն դրամ, որից 11.8 մլն դրամը մուտքագրվել էր 2013 թ.: Բյուջե մուտքագրված գումարների գերակշռող մասը բաժին է ընկնում ընկերությունների մասնավորեցումից մուտքերին՝ 53.1 տոկոսը (1022.8 մլն դրամ):

Աղյուսակ 1

Մասնավորեցված օբյեկտները 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ

	Օբյեկտների քանակը ըստ ծրագրի	Գնահատված օբյեկտների		Մասնավորեցված օբյեկտների		Մասնավորեցման կատարողականը, %
		քանակը	արժեքը (մլն դրամ)	քանակը	արժեքը (մլն դրամ)	
Ընդամենը	1190	1227	1209.0	1177	1087.8	98.9
այդ թվում՝						
«Փոքր» օբյեկտներ	295	300	188.6	289	166.9	98.0
որից՝						
առևտուր	163	168	137.0	161	116.4	98.8
հանրային սնունդ	19	19	12.3	17	11.5	89.5
կենցաղապատարկում	113	113	39.3	111	39.0	98.2
Անավարտ շինարարության օբյեկտներ	13	14	51.1	13	45.6	100.0
Վարձակալված տարածքներ	252	252	171.0	251	168.2	99.6
Համայնք	433	445	246.2	429	233.7	99.1
Կիսավեր օբյեկտներ	138	156	285.6	136	215.5	98.6
Այլ	59	60	266.5	59	257.9	100.0

Մասնավորեցման կատարողականի առավել ցածր մակարդակ դիտվել է համայնքի և «փոքր» օբյեկտների մասնավորեցման գործընթացում, համապատասխանաբար՝ 99.1 և 98.0 տոկոս: Հանրապետությունում «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցված 1177 օբյեկտներից 546-ը կամ 46.4 տոկոսը մասնավորեցվել է վարձակալների կողմից, 224-ը կամ 19.0 տոկոսը՝ աճուրդի միջոցով, 198-ը կամ 16.8 տոկոսը ուղղակի վաճառվել է նախօրոք հայտնի գնորդին, 167-ը կամ 14.2 տոկոսը ձեռք են բերվել աշխատանքային կոլեկտիվների կողմից, 41-ը կամ 3.5 տոկոսը՝ ուղղակի անհատույց տրամադրման ձևով, 1-ը կամ 0.1 տոկոսը՝ մրցութային վաճառքի ձևով¹⁴:

Առևտրային կազմակերպությունների գործունեությամբ է պայմանավորված գործարարության զարգացումն ու ժամանակակից պայմաններում առկա տնտեսական, քաղաքական և սոցիալական բնույթի բազմաթիվ հիմնախնդիրների լուծումը: Ձեռնարկությունների մակարդակով շուկայական ազդակներն աշխատել են դրանց նորացման ուղղությամբ: Արցախում գործում են արտասահմանյան ժամանակակից սարքավորումներով մեծաքանակ ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է որակյալ և մրցունակ արտադրանք:

Այսօր հանրապետության տնտեսության գործարարության, բանկային և ֆինանսական ոլորտներում աշխուժանում է ձեռնարկատիրական գործունեությունը: Դրա վառ ապացույցներից է նաև այն, որ գործարարության զարգացման նպաստավոր պայմանները հնարավորություն տվեցին իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին հավելյալ դրամական միջոցներն ուղղելու բանկեր՝ ավանդների տեսքով: Դրանք էլ, իրենց հերթին, ապահովում են երկկողմանի լրացուցիչ, ճիշտ է, ոչ բարձր, սակայն հաստատուն եկամուտներ:

ԼՂՀ ֆինանսական համակարգի կարևորագույն օղակներից է բանկային համակարգը: Դրա արդյունավետությունը բնութագրվում է առևտրային բանկերի գործունեությամբ: Այդ իսկ պատճառով ընդգծվում է առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ուսումնասիրության անհրաժեշտու-

¹⁴ Տվյալները բերված են «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական-վերլուծական եռամսյակային զեկույցից, (2013 թ. հունվար-դեկտեմբեր), Ստեփանակերտ, 2014, էջ 68:

թյունը, քանի որ բանկերի գործունեության ռեսուրսների գերակշիռ մասը ներգրավված միջոցներն են: Շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում առևտրային բանկերը կարևոր դերակատարություն ունեն երկրի տնտեսական ու գործարարության զարգացման գործում: Առևտրային բանկերի ներգրաված միջոցներն օգտագործվում են գլխավորապես ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկեր տրամադրելու և ներդրումներ կատարելու համար: Հաշվի առնելով զարգացման ռազմավարությունն ու ձևավորված մրցակցային իրավիճակը՝ յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է սահմանում իր կողմից ներգրավվող ավանդների կազմն ու պայմանները, իսկ ավանդների ներգրավումը եկամտաբերությունն ապահովող հիմնական գործոններից է: Կան որոշ գործոններ, որոնք ազդում են ավանդային բազայի ձևավորման վրա: Դրանցից են պետության դրամավարկային, հարկային քաղաքականությունը, բանկային համակարգը կարգավորող և վերահսկող օրենսդրությունը և այլն:

Եթե հանրապետության բանկերում 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 49307.4 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 19.7 տոկոսով, ապա 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 55902.1 մլն դրամ՝ նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ աճելով 13.4 տոկոսով, իսկ հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 10.2 տոկոսով: Ավանդների ընդհանուր կառուցվածքում 76.5 տոկոսը պատկանում է ռեզիդենտներին, 23.5 տոկոսը՝ ոչ ռեզիդենտներին, ընդ որում, ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդների 21.3 տոկոսը ցախահանջ է, 78.7 տոկոսը՝ ժամկետային¹⁵:

Աղյուսակ 2

ԼՂՀ բանկային համակարգում հաճախորդների և նրանց հաշիվների քանակը 2010-2013 թթ.

	առ 01.01.2011	առ 01.01.2012	առ 01.01.2013	առ 01.01.2014	01.01.2014-ի տվյալները 01.01.2011-ի տվյալների համեմատու- թյամբ (%)
Ընդամենը հաճախորդներ	56742	68177	77104	92688	163.3
<i>այդ թվում՝</i>					
իրավաբանական անձինք	2837	3984	3554	4051	142.8
ֆիզիկական անձինք	53905	64193	73550	88637	164.4
Ընդամենը հաշիվներ	73437	100976	121157	147247	200.5
<i>այդ թվում՝</i>					
իրավաբանական անձանց	5016	7644	6899	7419	147.9
ֆիզիկական անձանց	68421	93332	114258	139828	204.4

ԼՂՀ բանկային համակարգի հաճախորդների թիվը 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ 68177 էր, որից ֆիզիկական անձինք՝ 64193, իրավաբանական անձինք՝ 3984, 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 77104, որից ֆիզիկական անձինք՝ 73550, իրավաբանական անձինք՝ 3554, իսկ 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 92688, որից ֆիզիկական անձինք՝ 88637, իրավաբանական անձինք՝ 4051:

¹⁵ Տես նույն տեղը, էջ 76:

ԼՂՀ տարածքում գործող առևտրային բանկերի ավանդների միջին տոկոսադրույքները 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ տատանվել են 8.1 տոկոսից մինչև 12.7 տոկոսի, իսկ 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 8.2 տոկոսից մինչև 13.1 տոկոսի սահմաններում:

Բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության մեծացումն ազդում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա՝ ապահովելով եկամուտների աճ, ներդրումների հնարավորություն և այլն: Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, գրանցվել է տնտեսավարող սուբյեկտների թվի աճ, ընդ որում, ձեռնարկությունների և կազմակերպությունների մասով՝ 9.5%-ով (284), իսկ անհատ ձեռնարկատերերի մասով՝ 46.6%-ով (2188): Պետք է նշել, որ ընտանեկան, դուստր, գյուղացիական անհատական ձեռնարկությունների, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասով չորս տարվա ընթացքում քանակական ոչ մի փոփոխություն չի կատարվել, իսկ անհատական ձեռնարկությունների և արտադրական կոոպերատիվների մասով կրճատվել է, համապատասխանաբար՝ 1-ով և 8-ով, որոնք սովորաբար վերակազմավորվում են որպես ԱԶ: Հատկանշական է, որ բաց բաժնետիրական ընկերությունների, պետական ձեռնարկությունների և այն փակ բաժնետիրական ընկերությունների մասով, որտեղ բոլոր բաժնետոմսերը պատկանում են պետությանը և համայնքներին, կատարվել են նշանակալից փոփոխություններ (կրճատումներ, համապատասխանաբար՝ 2-ով, 1-ով և 16-ով), որոնք էլ պայմանավորել են ՓԲԸ, ՍՊԸ և ԱԶ թվի զգալի աճ:

Աղյուսակ 3

Տնտեսավարող սուբյեկտներն ըստ կազմակերպչական ձևերի

Անվանումը	01.01.2011 դրությամբ	01.01.2012 դրությամբ	01.01.2013 դրությամբ	01.01.2014 դրությամբ	01.01.2014-ի տվյալները 01.01.2011-ի տվյալների համեմատու- թյամբ (%-ով)
Անհատական ձեռնարկություն	434	434	434	433	99.8
Ընտանեկան ձեռնարկություն	18	18	18	18	100.0
Դուստր ձեռնարկություն	39	39	39	39	100.0
Արտադրական կոոպերատիվ	406	400	398	398	98.0
Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն	2	2	2	2	100.0
Գյուղացիական անհատական ձեռնարկություն	1	1	1	1	100.0
Սահմանափակ պատասխա- նատվությամբ ընկերություն	1635	1713	1803	1924	117.7
Փակ բաժնետիրական ընկերություն	421	424	433	428	101.7
այդ թվում՝ բոլոր բաժնետոմսերը պատկանում են պետությանը և համայնքներին	106	103	100	90	84.9
Բաց բաժնետիրական ընկերություն	9	8	7	7	77.8
Պետական ձեռնարկություն	10	10	10	9	90.0
Ընդամենը	2975	3049	3145	3259	109.5
Անհատ ձեռնարկատեր	4699	5392	6186	6887	146.6

Դա բացատրվում է մի շարք պատճառներով, որոնցից կարելի է առանձնացնել գործարարության ոլորտի իրավական դաշտի կարգավորումը, բարելավումը, ապագայի հանդեպ վստահության ձևավորումը, որոնք էլ հանգեցնում են տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների թվի աճով՝ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունը ենթադրում է խոր վերլուծության և պետական օժանդակություն, որոնք կարող են ապահովել մակրո- և միկրոտնտեսական բարձր ցուցանիշներ, տնտեսական աճ և այլն, այսինքն՝ տնտեսական աճի բարձր ցուցանիշների արձանագրման նախապայմաններից է առևտրային կազմակերպությունների աճին անհրաժեշտ համապատասխան պայմանների ապահովումը: Ըստ այդմ՝ կարևոր է ներդրումներին առնչվող քաղաքականության օրենսդրական ամրագրման, համապատասխան միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով որոշակի միջոցառումների իրականացումը:

Գործարարության զարգացման ճանապարհին հանդիպող դժվարությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պայմանավորված են թե՛ արտաքին միջավայրի ուղղակի և անուղղակի անբարենպաստ գործոններով, թե՛ առկա հնարավորությունների թերօգտագործմամբ: Դա բացատրվում է ինքնուրույն փորձի բացակայությամբ և համաշխարհային փորձի օգտագործման որոշակի դժվարություններով: Ուստի ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների միասնացման անհրաժեշտություն է առաջանում, որը բխում է համայն հայության շահերից՝ Արցախի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու, տնտեսական, սոցիալական խոշոր հարցերի համատեղ լուծման և պետության ամրապնդման ու բարգավաճման նպատակով:

Տարիների ընթացքում ԼՂՀ-ում իրագործվեցին մի շարք տնտեսական բարեփոխումներ, որոնք նպատակ ունեին, ընդհանուր առմամբ, փոփոխության ենթարկելու տնտեսության զարգացման ուղղվածությունը և ստեղծելու գերակշռող մասնավոր հատված: Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակն օբյեկտիվորեն պահանջում էր ձեռնարկատիրական ոլորտի շարունակական կատարելագործում: Կարևորվում էր նաև այնպիսի հարկային և այլ մոտեցումների կիրառումը, որոնք, ըստ էության, կարող էին արդյունավետորեն ներգործել գործարարության զարգացման վրա:

Շարունակական բարեփոխումներն ու փոփոխություններն էապես կնպաստեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործարարության ոլորտի զարգացմանը, առևտրային կազմակերպությունների քանակական և գործունեության ծավալային աճին, հետևաբար՝ բնակչության բարեկեցության ապահովմանն ու կենսամակարդակի բարձրացմանը, ընդհանուր առմամբ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ТИГРАН АКОПЯН

Старший преподаватель кафедры
„Экономической теории и управления“ АрГУ,
кандидат экономических наук

Тенденции развития бизнеса в НКР.- Регулирование и улучшение правового поля бизнеса и формирование уверенности к будущему приводят к созданию благоприятных условий для развития экономики. В статье представлены тенденции развития бизнеса в экономике НКР. Приватизация государственного имущества, роль хозяйствующих субъектов и активизация их деятельности (например в банковском секторе) обеспечили развитие бизнес среды, которая очень важна для повышения уровня жизни и благополучия населения и улучшения социально-экономической ситуации республики.

TIGRAN HAKOBYAN

Senior Lecturer at the Chair of „Theory of Economics
and Management“ at ArSU,
PhD in Economics

Business Trends in the NKR.- The regulation and improvement of the legal framework and the formation of business confidence for the future lead to the creation of favorable conditions for economic development. The paper presents the business trends in the economy of the NKR. Privatization of the state property, the role of economic entities and enhancing their activity (for example, in the banking sector) have ensured the development of the business environment, which is very important in the improvement of the living standards and well-being of the population and the socio-economic situation in the country, in general.